
ԳՐԱԲԱՐԻ ՏՊԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԶՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ
(Ձեռագիր բառարանների նյութի հիման վրա)

ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ըստ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ XVIII դարից ավանդված մի շարք ձեռագրերում ամփոփված են հին հայերենի հոմանիշների առավել ամբողջական բառարանները՝ հետևյալ խորագրերով՝ «Նշանաքումն՝ նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառիս» (ձեռ. 566, 234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթէոսի վ. Բառգիրք հոմանիշ բառից» (ձեռ. 3110, 75ա-112ա), «Բառք նոյնանշանք՝ ժողովեալք ըստ այբուբենից, ի մխիթարեան Մատթէոսի գերերջանիկ վարդապետէ» (ձեռ. 873, 185ա-220բ և ձեռ. 775, 53ա-80ա): Նշվածներին հարկ է հավելել նաև ձեռ. 6762-ում ամփոփված անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռագրերի համեմատությունից պարզվել է, որ վերջինս և ձեռ. 566-ինը որոշ տարբերություններով հանդերձ նույնն են: Նշված ձեռագիր բառարաններում հանդիպում են՝ ա) գրաբարի տպագիր բառարաններում¹ չարձանագրված և բ) XVIII դարից հետո լույս տեսած բառարաններում վկայված բառեր: Եվ քանի որ ձեռագիր բառարանները չունեն բնագրային օրինակներ, ուստի առաջին խմբի բառերի գոյությունը փորձ է արվում հաստատել հայերենի բառակազմության կաղապարային կառույցների առանձնահատկություններով, իսկ երկրորդ խմբի բառերի գոյությունը, բնականաբար, հավաստում են հետազայում լույս տեսած բառարանները: Մակայն հավանական կրկնություններից (հոմանիշային շարքեր, ձեռագրահամարներ, էջեր և այլն) խուսափելու համար սույն հոդվածում բառերը ներկայացվում են միասնաբար, առանց վերը նշված խմբավորման. հետագա շարադրանքից

¹ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա-Բ, Երևան, 1965–1970:

² Պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

³ Խոսքը վերաբերում է Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. Ա-Բ, Վենետիկ, 1836–1837, Առձեռն բառարան հայկազեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865, Մխ. Սեբաստացի. Բառգիրք հայկազեան լեզուի և Բառգիրք ի գրաբարէ յաշխարհաբարոն, ուր մեկնին բառք Հայկազեան լեզուի սուկ աշխարհաբար կամ տաճկական բառիք (այսուհետև՝ ԲՀԼ և ԲԳԱ), Վենետիկ, 1769, Ն. Բիլգանդացի. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-5, Տնն, 1990 բառարաններին: Համեմատվել են նաև Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1-4, Երևան, 1971–1979, Եր. Մեղրեցի. Բառգիրք Հայոց (այսուհետև՝ ԲՀ), Երևան, 1975, Մ. Քաջուհի. Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, հ. 2, Վենետիկ, 1893, Մ. Ջախոջախեան. Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Վենետիկ, 1837, Գ. Փետրովսկի. Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1829, Ռ. Ղազարեան. Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), հ. 1-2, Երևան, 2000, Ռ. Ղազարեան. Գրաբարի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ԳՀԲ), Երևան, 2006, որոնք անհրաժեշտության դեպքում վկայակոչվում են:

պարզորոշ է դառնում բառերի՝ բառարաններում վկայված կամ չվկայված լինելը:

Ակնապուշել. հոմանիշային շարքն է՝ հայիլ. նայիլ. յառել՝ պշնուլ. ակնապուշել⁴. նկատել. վերանկատել. վերակնել. կարկատել. տեսանել (ձեռ. 6762, 114ա. 566, 255ա. 3110, 96բ. 775, 65բ. 873, 201բ⁵):

Ըստ բառարանների՝ գրաբարում և միջին հայերենում բառասկզբի ակն արմատով վկայված են մոտ մեկ տասնյակ բայեր. հմմտ. ակնառել, ակնարկել, ակնածել, ակնկալել, ակն(ա)հարիլ, ակնկորել, ակն(ա)բացել և այլն:

Հ. Աճառյանը պիշ արմատի («յառած աչքերով նայիլը»)⁶ «գաւառական» ձևերը թվարկելիս «կարճատես», «շիլ» նշանակություններով պուշ// բուշ արմատական ձևն է ներկայացնում Ալաշկերտի, Մուշի, Նոր Նախիջևանի, Մեքաստիայի, Նոր Բայազետի բարբառներում⁷: Միաժամանակ ակնապիշ-ը համարելով «նոր բառ»՝ Հ. Աճառյանն արձանագրում է նաև XVII դ. վկայված ակնապուժիլ-ը՝ «վրան նայելով հիանալ» նշանակությամբ (ՀԱԲ, ն. տ.(: «Հայոց լեզվի բարբառային բառարանը» հավելում է Արարատյան, Կարինի, Ակնի, Վանի, Մոկսի բարբառներում գործածվող պուշ // պյուշ- ի նաև «աչքերը հառած՝ ակնապիշ նայող» իմաստը⁸:

Ուրեմն և նկատի առնելով վերը նշվածը՝ ակնապուժիլ-ից բացի կարելի է թերևս, ընդունել ակնապուշել-ը՝ փոքր-ինչ սաստկական նշանակությամբ՝ «աչքերը սևեռած, հառած անթարթ նայել»:

Այլային. հանդիպում է օտար. օտարական կամ օտարածին. այլասեռ. այլային. այլազգ. անընտել⁹. անձանօթ (եթե պիտոյ իցե տե՛ս և զպանդուխտն(հոմանիշային շարքում (ձեռ. 6762, 129բ. 566, 278բ. 3110, 112ա. 775, 80ա. 873, 220բ(: Այն ճիշտ նույնպիսի կազմություն է, ինչպիսին են դերանուն (այս դեպքում, սակայն, անորոշ դերանուն (+ ային վերջածանց կադապարով հայերենում վկայված իւրային, մերային, ձերային, նոցային բառերը⁷: Այլային-ը, ամենայն հավանականությամբ, կազմվել է ի հակադրություն յուրային-ի: Ինչ վերաբերում է օտար (այլ իմաստային առնչությանը, ապա ՆՀԲ-ն օտար բառի բացատրություններում արձանագրում է նաև այլ-ը (ՆՀԲ, հ. Բ, էջ 1028), իսկ այլ-ը՝ նշում «որպէս Օտար»⁸: Նոր Նախիջևանի բարբառում այլու-ն ունի «օտար» նշանակությունը՝ «Գնացին, էլան ի դուռս այլուին»⁹: «Արդի հայերենի

⁴ Ձեռ. 3110-ում յառիլ հնչունական տարբերակն է:

⁵ Ձեռ. 6762-ում և 3110-ում՝ ակնապուժել:

⁶ Հոմանիշային շարքերը ներկայացվում են նշված բոլոր ձեռագրերի բառերի համատեղմամբ:

⁷ Հմմտ. «...ումկ. պուշ, որ յառեալ հայի կկոցեալ աչօք». ՆՀԲ, հ. Բ, էջ 649:

⁸ ՀԱԲ, հ. 4, 1979, էջ 83-84: Տե՛ս նաև՝ Մ տ. Մ ա լ ի ս ա ս ե ա ն ց. Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՄՀԲԲ), Երևան, հ. 4, 1945, էջ 118:

⁹ Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Ե, Երևան, 2008, էջ 138:

⁷ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՍԲ), Երևան, 2010, էջ 795:

⁸ ՆՀԲ, հ. Ա, էջ 82:

⁹ ՀԼԲԲ, հ. Ա, 2001, էջ 53:

բացատրական բառարանի» տվյալներով օտար-ը «կողմնակի, ուրիշ, այլ» իմաստներն ունի¹⁰:

Ատենաբան. վկայված է ճարտասան. ճարտարաբան (, հոետոր. բետոր. ճոռոմաբան. - ճոռոմախօս. ատենաբան. փաստաբան. խորախօս հոմանիշային շարքում (ձեռ. 6762, 116բ. 566, 259ա. 3110, 100ա. 775, 68ա. 873, 204բ): Գրաբարի բառարանները վկայում են ատենաբանել, ատենաբանություն, ատենաբար բառերը (ՆՀԲ, հ. Ա, էջ 335)¹¹: «Միջին հայերենի բառարանը» նշում է ատենաբանություն-ը իբրև «ատենաբանելը, ճառախոսություն»¹²:

Հ. Աճառյանը «թուարան, բուսարան, լեզուարան» բառերն է թվարկում «նոր գրականում ստեղծուած բազմաթիւ նոր բառեր»-ի շարքում (ՀԱԲ, հ. 1, էջ 385):

Ս. Գալստյանը ժամանակակից հայերենում առանձնացնում է քան ածանցով երկու կառույց՝ գոյականից և այլ խոսքի մասերի արմատներից կազմված. առաջինը՝ «նախատիպի ցույց տված առարկայի ուսումնասիրությամբ զբաղվող գիտության ճյուղի մասնագետ» բառակազմական նշանակությամբ (արվեստաբան, ախտաբան, երկրաբան, լեզվաբան և այլն)¹³: Նրա հավաստմամբ մյուս տիպի բաղադրություններում քան արմատի բառային նշանակությունը (որպես բաղադրության երկրորդ եզր գործածվելիս) «մթազնվում է», և դրանք ընկալվում են որպես ածանցավոր կազմություններ¹⁴: Սակայն չի նշվում, թե քան բաղադրիչն այս կազմություններում ինչ բառակազմական նշանակություն ունի, բայց և լսաբան-ը բացատրվում է «ձայնագետ», կոնծաբան-ը՝ «հարբեցող, հարբեցողության մասնագետ»:

Ըստ բառարանների տվյալների՝ գոեհկաբան, դատարկաբան, զավեշտաբան, - զվարճաբան, կատակաբան, կարճաբան, համառոտաբան, հեզնաբան, հստակաբան, ճարտարաբան, ճոռոմաբան, մեծաբան, սակավաբան կազմություններում քան բաղադրիչի բառակազմական նշանակությունն է «խոսող» (դատարկաբան՝ «դատարկ բաներ խոսող», - զվարճաբան՝ «Նույնն է Ձվարճախոս», սակավաբան՝ «քիչ խոսող, քչախոս». տե՛ս ԱՀԲԲ, էջ 259, 280, 363, 381, 699, 707, 804, 947, 987, 1268)¹⁵: Եվ թեև վերը նշված բաղադրություններում միայն կատակ բառն է գոյական, բայց և այնպես ատենաբան-ն էլ, թերևս, կարող է բառացի նշանակել «աստյանում, դատարանում խոսող»: Մանավանդ որ ատենաբան-ը «հոետոր» նշանակությամբ արձանագրել է ՄՀԲԲ-ն¹⁶: Նույն իմաստով, բայց և «հնց»

¹⁰ Է. Աղ ա յ ա ն. Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Երևան, 1976, էջ 1593:

¹¹ Տե՛ս նաև ՀԱԲ, հ. 1, 1971, էջ 287: Հմմտ. ԱԲ, էջ 128, ԳՀԲ, էջ 108, ԳԲ, հ. 1, էջ 198:

¹² Ռ. Ղ ա գ ա ր յ ա ն, Հ. Ա վ է տ ի ս յ ա ն. Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Երևան, հ. Ա, 1987, էջ 56:

¹³ Ս. Գ ա լ ս տ յ ա ն. Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 48-49:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Տե՛ս նաև ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), Երևան, հ. 3, 1974, էջ 331, 386, 442:

¹⁶ ՄՀԲԲ, հ. 1, 1955, էջ 249. տե՛ս նաև Ա. Խ ո ռ ի ա ր ա շ է ա ն ց. Բառարանի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ (այսուհետև՝ ԽՀԼԲԲ), Մոսկոյա, հ. 1, 1838, էջ 161:

նշումով են առանձնացրել բառը ԱՀԲԲ-ն (էջ 123) և ԺՀԼԲԲ-ն¹⁷: Եվ քանի որ հոեևոր-ը բացի «հոեևորական արվեստին հմուտ անձ» լինելուց ունի նաև «ճարտարախոս մարդ» և «ճարտախոս» նշանակությունները (հմմտ. ԱՀԲԲ, էջ 898, ԺՀԼԲԲ, հ. 3, էջ 384), ուստի «դատարանում խոսող» անձը (անկախ այն հանգամանքից՝ ում շահերն է ներկայացնում-պաշտպանում) պետք է ճարտար խոսի, ճարտարախոս լինի:

Նույն հոմանիշային շարքում առկա փաստաբան-ը Հ. Աճառյանը «նոր բառ» է համարում (ՀԱԲ, հ. 4, էջ 484): Այնինչ Երեմիա Մեղրեցին փաստաբան-ը բացատրում է որպես «պատճառաբան» (ԲՀ, էջ 323), այսինքն՝ «Որ պատճառք խօսի առ արդարացուցանել զդատ կամ զանձն» (ՆՀԲ, հ. Բ, էջ 614): Թերևս հարկ է հիշատակել հունարենից պատճենված և դասական հայերենում արձանագրված փաստաբանական «բարդ նորաբանությունը»՝ «պատճառները քննող» նշանակությամբ¹⁸:

ՄՀԲԲ-ում ամրագրված նշանակությունը՝ «1. Իրաւաբան, որ դատարանում - պաշտպանում է մէկի գործը» (հ. 4, էջ 489. տրվում է նաև «2. Ընդհանրապէս՝ պաշտպան» նշանակությունը), կիրառելի է նաև այժմ, բայց և ըստ բառարանների տվյալների՝ որոշակի գործառնությունների հավելումով (գործը վարել, իրավաբանական խորհուրդներ տալ և այլն. տե՛ս ԱՀԲԲ, էջ 1513)¹⁹: ԺՀԼԲԲ-ն միաժամանակ «փխր.» նշումով հավելում է նաև «Լավ ճարտախոս, իր խոսքը փաստարկներով հաստատող անձ» իմաստը²⁰:

Ամեն դեպքում և՛ խոսքը փաստարկող-հիմնավորողը, և՛ ապացույցներով խոսող-ներկայացնողը, և՛ որևէ մեկին պաշտպանողը (այն էլ դատարանում) պետք է փոքր-ինչ հոեևոր և ճարտարախոս լինի, որպեսզի կարողանա համոզել լսողին (առավել ևս երդվյալատենակալներին):

Գրաստախել. հոմանիշային շարքն է՝ յիմար. մորոս. անմիտ. անիմաստ. տգէտ. անգէտ. ոռակայ. տիմար. ախմար. իելաժէտ. իելագար. իելացնոր. յիմարամիտ. ախմարամիտ. բթամիտ. վայրենամիտ. պաճարամիտ⁽¹⁾. գրաստախել. շուարեալ⁽²⁾. մանկախել (ձեռ. 6762, 118ա. 566, 261բ. 3110, 102ա. 775, 69ա. 873, 207ա(։ Բաղադրված է գրաստ և իել արմատներով՝ բառացի «գրաստի խելք ունեցող» նշանակությամբ. կազմված է, թերևս, նշված հոմանիշային շարքում և հետագայում լույս տեսած բառարաններում առկա մանկախել-ի համաբանությամբ:

Ըստ «Հայոց լեզվի հանգաբառարանի»՝ բառավերջում իել արմատով կազմություններ հայերենում չկան²¹. Վիտ արմատով կազմությունները շուրջ յոթ տասնյակ են, մինչդեռ խելք-ով բաղադրությունները երեքն են²²:

¹⁷ ԺՀԼԲԲ, հ. 1, 1969, էջ 205:

¹⁸ Տե՛ս Գ. Մ ու ը թ ա ղ յ ա ն. Հունաբանությունները դասական հայերենում, Երևան, 2010, էջ 67:

¹⁹ Տե՛ս նաև՝ ԺՀԼԲԲ, հ. 4, 1980, էջ 639:

²⁰ Նույն տեղում:

²¹ Հմմտ. Հայոց լեզվի հանգաբառարան, Երևան, 1976, էջ 121–122:

Լ. Հովհաննիսյանը *Ջաքարիա Քանաքեռցու (XVII դ.) «Պատմագրություն»-ից առանձնացրել է պակասախելք կազմությունը*²³:

ՄՀԲԲ-ը «հագուադէպ բառ կամ նշանակություն» նշումով ունի գրաստամիտ բառը (ՄՀԲԲ, հ. 1, էջ 475, ԽՀՌԲ, հ. 1, էջ 296(, որն արձանագրում է նաև «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը»՝ «տե՛ս Բթամիտ» հղումով²⁴:

Նույն հոմանիշային շարքից խելաժէտ-ը բաղադրված է խել հայերեն և -ժէտ, ինչպես հավաստում են հետազոտողները, անկախաբար չկիրառվող փոխառյալ արմատներով²⁵. վերջինս իրանական *zatan, zatan* «գարնել, հարվածել, խփել» բայի հիմքից է, որը Գ. Ջահուկյանի վկայությամբ գիտակցվել է իբրև ինքնուրույն վերջածանց և հայկական հիմքերից կազմել բայեր²⁶: Հ. Աճառյանը -ժէտ-ը իմաստով նույնական է համարում հայերեն -հար-ին (ՀԱԲ, հ. 2, էջ 228(։ Լ. Հովհաննիսյանի կարծիքով էլ փոխառյալ որոշ բառերի համաբանությամբ հայերենը -ժէտ-ով կերտել է հիվանդություն նշող իմաստային դաշտը համալրող մի քանի նոր բառ։ Նա իր ենթադրությունն ամրագրում է նաև -ժէտ-ի բառաբարդման կաղապարների խիստ սահմանափակությամբ, որքանով այն առկա է միայն վերջահար դիրքում²⁷:

Վերը նշվածն է հաստատում նաև խելաժէտ բառը, որը, ինչպես արդեն հիշատակվել է, Հ. Աճառյանը իմաստով նույնական է համարում խելահար-ին՝ «խենթացած, խելագարված, խելքը թոցրած» նշանակությամբ. խելահար-ը «բնատ.» նշումով առկա է միայն ՄՀԲԲ-ում (էջ 573(։ ՄՀԲԲ-ն «հագուադէպ բառ կամ նշանակություն» նշումով է արձանագրում խելաժէտ-ը՝ հղելով խելագար-ին²⁸. նույն ձևով է վկայում ԽՀՌԲ-ն (հ. 1, էջ 32(։

Խաւարագոյն, խաւարատիպ. հոմանիշային շարքն է՝ սեաւ. սևագոյն, սևաթոյր. թուխ. արջնատես. արջնաթոյր. թխատիպ. մթագոյն. մթնալուրթ. խաւարագոյն. խաւարատիպ. լրթագոյն՝ սևատես (ձեռ. 6762, 124ա. 566, 270ա. 3110, 107ա. 775, 74ա. 873, 213ա (։ Երկու կազմություններում էլ խաւար «մութն. մթություն» արմատն է [ՆՀԲ, հ. Բ, էջ 933. մութ(ս)՝ «թխագոյն».տե՛ս ՆՀԲ, հ. Բ, էջ 299]։ Բարդությունները, թերևս, կազմված

²² Հմմտ. նույն տեղում, էջ 502–503 և 609:

²³ Լ. Հովհաննիսյանի և իսյանի. XVII դարի գրաբարը. – «Լեզվի և ոճի հարցեր», VII, Երևան, 1983, էջ 151:

²⁴ Ա. Մուրադյանի և իսյանի. Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ՆՀԲ), Երևան, 1967, էջ 154:

²⁵ Տե՛ս ՀԱԲ, հ. 2, 1973, էջ 228: Նաև՝ Լ. Հովհաննիսյանի և իսյանի. Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 131–132, Լ. Հովհաննիսյանի և իսյանի. Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (I մաս), Երևան, 2008, էջ 69:

²⁶ Գ. Ջահուկյանի. Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 526, 570: Հմմտ. նաև ՀԱԲ, էջ 281:

²⁷ Լ. Հովհաննիսյանի և իսյանի. Հայերենի իրանական փոխառությունները, էջ 131–132:

²⁸ ՄՀԲԲ, հ. 3, 1944, էջ 254:

*Ձեռ.6762,566,873,775-ում լրդագոյն:

են բառարաններում և հոմանիշային շարքում առկա սևագոյն և թխատիպ (=սևագոյն, ՆՀ-Բ, հ. Ա, էջ 813(բառերի համարանությամբ):

Ստ. Մայխասյանցն արձանագրում է խաւարակերպ բարդությունը՝ «խաւարի նման, մուլթ, սև»²⁹: Եվ եթե տիպ-ն ու կերպ-ը ՀԼՀԲ-ում հոմանիշ են դիտվում (էջ 625(, ուրեմն խաւարատիպ-ն էլ ունի այն նույն իմաստը, ինչ խաւարակերպ-ը:

Հոմանիշային շարքում առկա է նաև մթնալուրթ-ը՝ մութ(ս) և լուրթ բաղադրիչներով: Լուրթ-ը նշանակում է «Աղօտ սպիտակ խառն ընդ կապոյտ, կամ թխագոյն բաց ...» (ՆՀԲ, հ. Ա, էջ 903(, իսկ լրթագոյն հոմանիշը բացատրվում է որպէս «...մթնագոյն» (ՆՀԲ, հ. Ա, էջ 907(, Թերևս նաև այս վերջին բացատրությունը նկատի առնելով է Հ. Աճառյանը նշում՝ «...լուրթ է ըստ ոմանց նաև «մութ, սև, թուխ» (ՀԱԲ, հ. 2, էջ 304(, Բայց և հետագայում Գ. Ջահուկյանն առանձնացնում է լուրթ-ի «մուգ, մութ» նշանակությունը (տե՛ս ՀՄԲ, էջ 303(, Լ. Հովհաննիսյանն էլ գրաբարի գունանունների բառիմաստային խումբը քննելիս կապոյտ (ուրեմն նաև լուրթ) գունանվան առնչությամբ վկայում է. «...գունային առանձնահատկությամբ եզրեր ունի սևի, կանաչի, մոխրագույնի և այլ երանգների հետ...»³⁰ (ընդգծումը՝ Ն. Հ., այլև սեաւ-ի առնչությամբ փաստում՝ «հ.-ե. ծագումով... մութ/մութն - արմատը թերևս գործառել է սև, սևություն իմաստով»³¹:

Սեաւ («Գույն մթին և խաւարին՝ հակառակ սպիտակի...» տե՛ս ՆՀԲ, հ. Բ, էջ 704) հենաբառով հոմանիշային շարքն ավարտվում է սևատես բարդությամբ (այն չկա ձեռ. 566-ում և 3110-ում(, Սև և տես արմատներով բաղադրված կազմությունն էլ, հավանաբար, հոմանիշային շարքում «Սեաւ տեսլեամբ կամ տեսակաւ. արջնագոյն. թխագոյն...» նշանակությամբ առկա արջնատես-ի (ՆՀԲ, հ. Ա, էջ 375(և ՄՀԲ-ում «Մթին՝ մռայլ տեսք ունեցող» նշանակությամբ վկայված մթնատես-ի նմանակումն է (հ. Բ, 1992, էջ 133):

Թեև արդի հայերենին խորթ չէ համանման կազմություններում երկրորդ բաղադրիչ տես-ի՝ «տեսք ունեցող, տեսքով» նշանակությունը (հմմտ. բարետես, գեղատես, դժնատես, սիրունատես. հմմտ. նաև լատինարան հայերենում Վ. Համբարձումյանի արձանագրած խոնարհատես-ը³² (բայց արդի հայերենի բացատրական բառարաններում սևատես-ը այլ իմաստ ունի՝ «ամեն ինչ սև գույնով տեսնող, ամեն ինչ մռայլ գույներով տեսնող՝ ներկայացնող՝ բնութագրող, հոռետես» (ԱՀԲԲ, էջ 1295, ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 291(:

Հարկ է, թերևս, առանձնացնել ՆՀԲ-ում և ՄՀԲ-ում «սևագոյն, սև երևացող» նշանակությամբ առկա սևատեսակ-ը (ՆՀԲ, հ. Բ, էջ 711, ՄՀԲԲ, հ. 4, էջ 208(, որը «սևավուն»

²⁹ ՄՀԲԲ, հ. 2, 1944, էջ 251:

³⁰ Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն . Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (I մաս), էջ 115:

³¹ Նույն տեղում, էջ 123:

³² Վ. Հ ա մ բ ար ձ ու մ յ ա ն . Լատինարան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Երևան, 2010, էջ 208:

նշանակությամբ և «հնց.» նշումով վկայված է արդի բացատրական բառարաններից միայն ԱՀԲԲ-ում (էջ 1295):

Խստավզել. ՄՀԲ-ն XIV դ. ձեռագրերի հիշատակարաններից արձանագրել է խստավզել--ը՝ «համառել» նշանակությամբ (ՄՀԲ, հ. Ա, էջ 358): Ձեռագիր բառարաններում այն իմաստային փոքր-ինչ այլ նրբերանգ ունի և տրվում է հպարտանալ. ամբարտաւանել. փքանալ. ուռել. յորանալ. գոռոզանալ. բարձրամտել⁽¹⁾. մեծամտել. բարձրավզել. ընդվզել. ամբարհաւաճել. սնափառիլ. փառամոլիլ. սնապարծել. յանդգնիլ. ժպրհիլ. սոպոռանալ⁽²⁾. խստավզել⁽³⁾. սիգալ⁽⁴⁾. ընդունայն պանծալ. անձնացոյց լինել (ձեռ. 6762, 115ա. 566, 256բ. 3110, 97բ. 775, 66բ. 873, 203բ(հոմանիշային շարքում³³):

Ինչպես արդեն նշվել է, ձեռագիր բառարանները չունեն բնագրային օրինակներ, և ի հաստատումն խստավզել-ի՝ միջին հայերենում ունեցած ենթադրվող «հպարտանալ» իմաստի՝ բերենք մի քանի դիտարկում:

ՆՀԲ-ն արձանագրել է խստավիզ բառը՝ «Տ. Խստապարանց» նշումով՝ վերջինս բացատրելով իբրև «...բարձրավիզ. անընկճելի. յամառ. ընդվզեալ. անասստ...» (ՆՀԲ, հ. Ա, էջ 998. տե՛ս նաև ԳՀԲ, էջ 347. ընդգծումը՝ Ն. Հ.): Ընդգծված անընկճելի-ն, ընդվզեալ-ը, անասստ-ը նաև նշանակում են «չձնշվող, չխոնարհվող, անհնազանդ, քմբոստ» (հմմտ. ՆՀԲ, հ. Ա, էջ 149, 323, 776, 781):

ՀԱԲ-ն ունի Վզան «հպարտ» նշանակությամբ բառը, որից վզանիլ «հպարտանալ»՝ նշե-լով, որ «ՆՀԲ համարում է վիզ բառից, ինչպես կայ հյ. ընդվզիլ...» (ՀԱԲ, հ. 4, էջ 333-334): ՆՀԲ-ի բնագրային օրինակը Փիլոն Եբրայեցուց է՝ «Բանս անխոնարհս, և վզան, և անգայ, նմանեալ կաղնու, որ բեկցի յառաջ զխոնարհելն և զ՝ դալ» (ՆՀԲ, հ. Բ, էջ 818): Միաժամանակ ՆՀԲ-ն ունի Վզիմ, Տ. Ընդվզիլ բառահոդվածք. վկայությունը Մխ. Գոշի «Դատաստանագրքից» է (ՆՀԲ, հ. Բ, էջ 819): ԲՀ-ի առանձնացրած Վզանումն - անխոնարհումն (էջ 302) բառահոդվածով էլ «չխոնարհվել»-ը փոխաբերական իմաստով, թերևս, հանգում է «հպարտ լինել»-ին: Այնուհանդերձ «հպարտանալ» իմաստն ընդունելի է, մանավանդ եթե նկատի առնվեն «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» արձանագրված հետևյալ դարձվածային միավորները՝ Վիզը ծուռ «զլխակոր, տխուր, ընկճված, անօգնական», Վիզը ծոռել «...3. Խոնարհվել», Վիզը ծուռ մնալ «1. Հուսահատվել, վիատվել», Վիզը կոտրել «1. Մեծ չափով վնասել, ընկճել...»³⁴:

¹Ձեռ.6762-ում՝ գորոզանալ, ձեռ.3110-ում՝ գոռոզանալ:

²Ձեռ.6762-ում՝ փառձրամտել:

³Ձեռ.6762-ում՝ սոպոռ առնել:

⁴Ձեռ.3110-ում՝ խստավիզ լինել:

⁵Ձեռ.3110,556,873,566-ում՝ սեգ լինել:

³³ Հմմտ. նաև այտուցեալ հենարառով հոմանիշային շարքը. տե՛ս Ն. Հո վ հ ա ն ի ս յ ա ն. Հայերենի հոմանիշային շարքերի համադրական քննության փորձ.- ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2005, -1, էջ 37-38:

³⁴ Ա. Ս ու ք ի ա ս յ ա ն, Ա. Գ ա լ ս տ յ ա ն. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան (այսուհետև՝ ՀԼԴԲ), Երևան, 1975, էջ 550-551. հմմտ. նաև ՀԼԲԲ, հ. 2, 2010, էջ 70-71:

Համակուտել. հոմանիշային շարքն է՝ ժողովել. հաւաքել. կուտել. համակուտել. բամել. - գումարել. խմբել. խոնել. խոկել. հոլոնել՝ բովանդակել. եկեղեցուցանել. հանդես առնել (ձեռ. 6762, 108բ. 566, 246բ. 3110, 89ա. 775, 60բ. 873, 195բ): Համ- + բայ կադասպարով համակուտել բառադարձությունը կարելի է հավելել Հ. Աճառյանի՝ համ- նախածանցի «ամբողջ, բոլորովին, - շատ, յոյժ (սաստկական կազմելու համար)» նշանակությամբ արձանագրած կազմություններին³⁵: Համակուտել բառացի կարող է նշանակել «շատ կուտել»:

Համ- նախածանցով հաջորդ կազմությունը համահետևիլ-ն է՝ վկայված հետևիլ⁽¹⁾ կամ - համահետևիլ⁽²⁾. զհետ երթալ կամ երթալ զկնի նորա⁽³⁾. զհետ եղև նորա հոմանիշային շարքում (ձեռ. 6762, 114բ. 566, 256ա. 3110, 97բ. 775, 66ա. 873, 202ա): Այս դեպքում արդեն համ-ը «նոյն, միևնոյն» (ՀԱԲ, հ. 3, էջ 17) նշանակությունն է արտահայտում, որը և պարզորոշ է գրաբարի բառարաններում առկա համահետ («միահետ. համաշալիղ. զուգընթաց»՝ ՆՀԲ, հ. Ա, էջ 17. «հաւասար քալող»՝ ԱԲ, 463. տե՛ս նաև՝ ԽՀՌԲ, հ. 2, էջ 11՝ «Идущий по одной и той же дороге; одинакового поведения») կազմությունից:

«Հագուաղէպ բառ կամ նշանակութիւն» նշումով համահետևել-ն արձանագրում է ՄՀԲԲ-ն՝ «Միևնոյն ճանապարհով մէկի հետ զնալ, մէկին հետևել» նշանակությամբ (ՄՀԲԲ, հ. 3, էջ 24): Նույն իմաստով է վկայում ԺՀԼԲԲ-ն (հ. 3, էջ 269):

Վ. Համբարձումյանը լատինարան հայերենում նշել է համագանագանիմ, համաժողովել, համահաշուիլ, համակապեալ բառադարձությունները³⁶:

ՆՀԲ-ում չվկայված բառերի շարքում համ- + բայ կադասպարով և համ-ի՝ վերը նշված նշանակությամբ կազմություններ է առանձնացրել նաև Լ. Հովհաննիսյանը Մ. Կադանկատվացու և Գր. Նարեկացու երկերում³⁷:

Տարայարգել բայը վկայված է արհամարհել. անգոսնել. անգուշել՝ նշկահել. խոտել. քամահրել. անարգել. տարայարգել. անպատուել. առ ոչինչ համարել. առ ոտս հարկանել. մերժել. եպերել⁽⁴⁾ հոմանիշային շարքում (ձեռ. 6762, 102բ. 566, 237բ. 3110, 77բ. 775, 54բ. 873, 187բ):

Հետազոտողներն արձանագրել են տար-ի՝ «հեռու, հեռավոր» իմաստի մթագնմամբ ան-, ապ-, չ- ժխտական նախածանցների գործածությունն ձեռք բերելը (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 381)³⁸:

ՀԼԲԲ-ում արձանագրված «համառել» նշանակությամբ Վիգը ընկնել²-ը բնորոշ է Ղարաբաղի բարբառին (ՀԼԲԲ, հ. 2, էջ 69):

¹Ձեռ.6762-ում հոյնել:

²ՀԱԲ, հ. 3, 1977, էջ 18:

³Ձեռ.775-ում հետևել:

⁴Ձեռ.6762-ում համհետևել:

⁵Ձեռ.6762-ում երթալ զկնի նորին:

⁶Վ. Համբարձումյան. նշվ. աշխ., էջ 218–219:

⁷Լ. Հովհաննիսյան. Գրաբարի բառարան: Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010, էջ 159–160:

⁸Ձեռ.6762-ում անուշել:

⁹Ձեռ.775-ում եպիրել:

Ուրեմն և տար- նախաձանց + բայ կաղապարով տարայարգել-ը նույն «չհարգել»-ն է:

Տար- նախաձանցով մյուս բաղադրությունը տարացրել-ն է. այն, հավանաբար, կարելի է ձեռագրային հավելում դիտել, քանի որ առկա է միայն ձեռ. 566-ում՝ աւերել. եղծանել. ապականել. ջնջել. բնաջինջ առնել. անհետ առնել. աղարտել. փլուզանել. կործանել. քանդել. քակել. քայքայել. տապալել. հարթայատակել. հարթայատակ առնել. հիմնայատակ առնել. ցրել. տարացրել. ջրել (237բ-238ա) հոմանիշային շարքում:

ՆՀԲ-ն և ՀԱԲ-ը նշում են ցրել-ի «Ցիր և ցան առնել, ցրուել. քայքայել. եղծանել. փարատել» իմաստները (ՆՀԲ, հ. Բ, էջ 919, ՀԱԲ, հ. 4, էջ 456), և տար- նախաձանցով այս դեպքում, թերևս, սաստկացվում են «քայքայել և ցիրուցան անել»-ի նշանակությունները. տարացրել՝ «ավերել, հիմնահատակ քանդել»:

Նույն կաղապարով կազմություններ են հանդիպում լատինաբան հայերենում, թեև, ինչպես նշվում է, այդ ածանցը սակավաթիվ բառերում է գործածվում (տարահամոզել, տարացնդիմ³⁹):

Մինևնույն սաստկական իմաստն է արտահայտում նաև հոմանիշային շարքի հարթայատակել-ը՝ բաղադրված հարթ, յատակ արմատներով և -ել բայական վերջավորությամբ: Բառարանները հարթայատակ-ը և յատակել-ը վկայում են V դ.՝ համապատասխանաբար «Հարթ յատակի, այսինքն հաւասար գետնոյ» (ՆՀԲ, հ. Ա, էջ 61, ՀԱԲ, հ. 3, էջ 58) և «քանդել մինչև ի յատակ» (ՆՀԲ, հ. Բ, էջ 338-339), «գետնի հաւասար ընել» (ԱԲ, էջ 586), «քարուքանդ անել» (ՀԱԲ, հ. 3, էջ 386), «1. Տապալել, հիմնայատակ առնել» (ԳՀԲ, էջ 503) նշանակություններով: Բաղադրելով հարթայատակ-ն ու յատակել-ը՝ թերևս ավելի են սաստկացվել «հիմնահատակ՝ քարուքանդ՝ բնաջինջ անել», «հիմնահատակ ավերել» նշանակությունները:

Փառապատուել. հոմանիշային շարքն է՝ փառաւորել. փառաբանել. փառագարդել. տալ զփառս. փառապատուել. կամ պատուել. պատիւ դնել. պատիւ տալ. յարգել. գովել. բարեբանել. մեծացուցանել. ներբողել. գերահռչակել. բարեհամբաւել. սքանչելի առնել (ձեռ. 676-2, 128բ. 3110, 110ա. 775, 78բ. 873, 218բ. բառը չկա ձեռ. 566-ում): Պարզորոշ է՝ փառապատուել բառացի նշանակում է «փառքով պատվել»: Բառը «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշումով արձանագրել է միայն ՄՀԲԲ-ն՝ «Փառաւորել ու պատուել, պատիւ՝ յարգանք ցոյց տալ» (հ. 4, էջ 488):

Արդի բացատրական բառարաններում փառապատուել-ի բացատրությունը բոլորովին այլ է՝ «Փառով պատվել՝ ծածկվել, փառ կապել» (ԱՀԲԲ, էջ 1513, ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 637):

Ստապաշտ-ը վկայված է կռապաշտ. կռապարիշտ. դիցապաշտ. հեթանոս. ստապաշտ. անհաւատ հոմանիշային շարքում (ձեռ. 6762, 113ա. 566, 253բ. 3110, 95բ. 775, 64բ. բառը չկա ձեռ. 873-ում): Սուտ և պաշտ արմատներով բաղադրությունը բառացի նշանակում է «սուտը պաշտող»:

³⁹ Նանս՝ Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայերենի իրանական փոխառությունները, էջ 144:

⁴⁰ Վ. Հ ա մ բ ա ր ձ ու մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 221:

Բառը, թերևս, ստեղծվել է կուսպաշտ և դիցապաշտ բառերի համաբանությամբ՝ կեղծ, սուտ համարվող կրոնի՝ կուռքերին երկրպագող հետևորդներին առավել ճշգրիտ և հստակ բնութագրելու համար, ինչպես և վկայում են արդի բացատրական բառարանները՝ «սուտ բաներ, կեղծիքը պաշտող, ստության պաշտամունք ունեցող» (ՄՀԲԲ, էջ 1329, ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 331):

Քարկապել. սա նույնպես կարելի է ձեռագրային հավելում դիտել, որքանով արձանագրված է միայն ձեռ. 3110-ում, մյուս ձեռագրերում՝ կարկատել բայն է. հունանիշային - շարքն է՝ շարակցել. շարահիսել. շարամանել. փաղահիսել. բաղահիսել. բաղակցել. բաղադրել. յոդել. հիսել. միաուրել կամ միացուցանել. կցել կամ կցկցել (կարկատել. քարկապել. շարակարգել (ձեռ. 6762, 119բ. 566, 203բ. 775, 70բ. 873, 208բ. 3110, 103բ): Քարկապել նշանակում է «կցել կամ ամուր հանգուցել»:

ՄՀԲԲ-ն «գաւառական բառ կամ նշանակութիւն» նշումով քարկապ-ը հղում է քարհանգուստ-ին, որն էլ բացատրում է իբրև «Պինդ ձգված՝ դժուար քանդվող հանգոյց, կրկապ» (հ. 4, էջ 562-563): ՄՀԲԲ-ում գործողության իմաստ արտահայտել - նշելու դեպքում քարկապ - բառահողվածից առանձնացվում են քարկապ անել // գցել հարադիր կազմությունները (էջ 1561):

Հունանիշային շարքի՝ գրաբարի տպագիր բառարաններում չվկայված մյուս կազմությունը բաղակցել⁴⁰ (-ն է՝ բաղ - նախածանցով և կցել բայով):

Հ. Աճառյանի հավաստմամբ բաղ-ը «...դարձել է նաև նախամասնիկ՝ համապատասխան հյ. համ, շաղ, շար, յար, կիցմասնիկներին, որով ստրկօրէն թարգմանուած են շատ յոյն բառեր...» (ՀԱԲ, հ. 1, էջ 395): Ուրեմն և բաղակցել-ը համահավասարաբեք է շարակցել-ին:

Բաղակցել-ը «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշումով արձանագրել են ՄՀԲԲ-ն (հ. 1, էջ 319), ԺՀԼԲԲ-ն (հ. 1, էջ 274), նաև ԽՀՌԲ-ն (հ. 1, էջ 210):

Բաղ- + բայ կաղապարով ՆՀԲ-ում չվկայված կազմություններ է հայտնաբերել Լ. Հովհաննիսյանը⁴¹: Վ. Համբարձումյանը, արձանագրելով բաղազանիլ բայը, գտնում է, որ լատինարան հայերենում «...այս ածանցով շատ հազվադէպ են կազմվել բառեր»⁴²:

Այսպիսով՝ գրաբարի տպագիր բառարաններում չվկայված վերոնշյալ բառերը լիովին համապատասխանում են հայերենի բառակազմության կաղապարային կառույցներին: Մրանցից մի քանիսն արձանագրվել են հետագայում լույս տեսած բառարաններում՝ իմաստային փոքր-ինչ այլ նրբերանգներով կամ բոլորովին այլ իմաստով:

⁴⁰Ձեռ.3110-ում կցմցել:

⁴¹Ձեռ.556-ում բաղկցել:

⁴²Լ. Հովհաննիսյան. Գրաբարի բառարան..., էջ 66:

⁴³Վ. Համբարձումյան. նշվ. աշխ., էջ 217:

СЛОВА, НЕЗАСВИДЕТЕЛЬСТВОВАННЫЕ В ПЕЧАТНЫХ СЛОВАРЯХ ДРЕВНЕАРМЯНСКОГО
ЯЗЫКА

(На материале рукописных словарей)

ՆԱԶԻԿ ՕԳԱՆԵՏՅԱՆ

Р е з ю м е

В рукописных словарях XVIII в. зафиксированы слова, незасвидетельствованные в печатных словарях армянского языка. И поскольку рукописные словари не имеют текстуальных примеров, делается попытка подтвердить существование этих слов структурными особенностями словообразования армянского языка и данными словарей армянского языка, изданных впоследствии. Рассмотрены слова *սկնսպուշել* «смотреть пристально», *սյլսյին* «чужой», *ստենարան* «выступающий в суде», *փաստարան* «оратор», *գրաստախել* «глупый», *խելածէտ* «глупый», *խաւարագոյն*, *խաւարատիւ* «черный», *ւթնաւորթ* «черный», *սևատես* «черный», *խստալգել* «гордиться», *համակուտել* «копить, скупивать», *համահետնիլ* «следить, следовать», *տարայարգել* «не уважать», *տարացրել* «разрушать», *հարթայատակել* «разрушать до основания», *փառապատուել* «почитать, прославлять», *ստապաշտ* «поклоняющийся лжи», *քարկապել* «завязать узлом», *բաղակցել* «соединять».

WORDS UNTESTIFIED IN THE PRINTED
DICTIONARIES OF GRABAR

(On the material of manuscript dictionaries)

ՆԱԶԻԿ ՈՎԿՆԱՆՆԻՍՅԱՆ

S u m m a r y

In the manuscript dictionaries of the 18th century some words are fixed, which were not testified in the printed dictionaries of old Armenian. Since the manuscript dictionaries have no textual examples, an attempt is made to verify the existence of these words by structural word-formation patterns of the Armenian language and by dictionaries of the Armenian, being published later. The words *սկնսպուշել* “to look fixedly / intently”, *սյլսյին* “somebody else's, another's”, *ստենարան* “orator”, *փաստարան* “orator”, *գրաստախել* “foolish, stupid”, *խելածէտ* “foolish, stupid”, *խաւարագոյն*, *խաւարատիւ* “black”, *ւթնաւորթ* “black”, *սևատես* “black”, *խստալգել* “to be proud”, *համակուտել* “to accumulate”, *համահետնիլ* “to watch, to follow”, *տարայարգել* “not respect”, *տարացրել* “to destroy, to demolish”, *հարթայատակել* “to raze”, *փառապատուել* “to glorify”, *ստապաշտ* “pagan”, *քարկապել* “to knot”, *բաղակցել* “to join, to unite” are considered.